

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

.....2009 թվականի N.....Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-Ի
N 620 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

որոշման հավելվածի 13-րդ կետի «Բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչություն» բառերը փոխարինել «Բուսասանիտարիայի պետական տեսչություն» բառերով:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

S. Սարգսյան

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշումը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2009 թվականի մայիսի 18-ին ընդունված «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխանեցման ապահովմամբ.

2. «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի հուլիսի 22-ի N 614-Ա հավելվածի 3-րդ կետի պահանջով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման և նվազեցման բացակայության մասին

Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարների տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի կապակցությամբ շահագրգիռ նախարարների առարկությունների ու
առաջարկությունների վերաբերյալ**

Առարկությունների և առաջարկությունների հեղինակը (ամսաթիվը)	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն N 01/16.21/4349-09 19.10.2009 թ.	«ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի թիվ 908-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի և «ՀՀ վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի թիվ 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունն առաջարկություններ և առարկություններ չունի:	
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե N 26709/3-2 20.10.2009թ.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 908-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի թիվ 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:	
Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարություն 23.10.09 N 1/4.4-Ե -7217	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 908-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:	

<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 03.11.2009 թ N Ե-5770</p>	<p>Հայտնում ենք, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 26-ի N 908-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի և «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998թ. նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:</p>	
--	---	--